թափուել սրբ. Դէորգ եպս Խաթիսեանից. մինչ Եւրոպայի հայոց առաջնորդ լինելն ուս ելիցէ իրաւունք է տալիս հայոց եկեղեցու հիմն ական կարգերը «ալաֆրանկա» կատարելու. մինչ առաջնորդը չպէտք է լիշէ ձեռնադրուելու ժամանակ եկեղեցու նորան տուած պատուէրները, երբ նա ուխտում է հաւատարիմ լինել եկեղեցու վարդապետութեան, նորա սուրբ Հայրերի դրած կանոններին և ծէսերի ու արարողութեանց անթերի կատարման։ «Որ քակէ զնանկ հայ ենի, խածանէ զնա օձ անապատի»։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ ԵՐԿԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն. Նախիջևանից մեզ հաղորդում են, որ տեղւոյն Հայոց բարեգործական ընկերութիւնը որոշել է առանձին գրքերով տպագրել Ռ. Պատկանեանցի գնտիպ և Մ. Նալբանդեանցի տպած և անտիպ բոլոր երկասիրութիւնները։

Տ. ՄԱԿԱՐԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Նորերս վախճանուած տ. Մարիամ Մակարեանը, ի միջի այլոց կտակել է 3000 ռուբլի հայոց դրամատիքական ընկերութեան, որպէս զի այդ գումարի տոկոսիքը իւրաքանչիւր տարի մրցանակ տրուի հայերէն լեզուով գրուած լաւագոյն դրամատիքական գրուածների։ 1000 ռուբլի Ներսիսեան Հոգևոր Դպրոցին չքաւոր աշակերտների համար, 1000 ռուբլի Վերայի հայոց եկեղեցուն, որի տոկոսիքը իւրաքանչիւր տարի զատկի տօնին պէտք է բաժանուի աղքատներին, 1000 ռուբլի Թիֆլիսի հայուհեաց բարեգործութեան ընկերութեան, որպէսզի այդ գումարի տոկոսիքով մի աղքատ աղջիկ կրթուի։

ՂՈՒԿԱՍԵԱՆ ԹԱՆԴԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՆԴԱՄԵՐ

ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց Նայրապետն Պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. Մնալուն Ցանձնաժողովոյ կրօնա-պատմական Թանգարանի Վանաց առաջ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ։

Հիմնադիրն Թանգարանիդ մեծարգոյ պ. Աւետիսն Բալլեան Ղուկասեանց գրութեամբ ծանուցեալ մեզ զվաղահասմահուանէ երկուց պիտանի անդամոց դորին՝ Գէորգայ Եւանդուլեան և Աղէքսանդրի Երիցեանց, խնդրէ ի տեղի նոցա նը. շանակել զպ. Նիկողայոսն Տէր Յարութիւնեանց Յարոյ և զպ.